30 JAN 2018

ԱՆԴՐ. ՖԻՆԺՈՂԿՈՄԱՏԻՆ
ԿԻՑ
ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ
ՀԵՌԱԿԱ ՖԻՆԱՆՍԱ-ՏՆՏԵ-
ՍԱԳԻՏԱԿԱՆ ՅԵՎ ՀԱՇ-
ՎԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏ
„ՋԱԿՋԻՖԵՆ“
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

# ՊՐՈՍՊԵԿՏ

## 1934 ԱԿ. ՏԱՐՎԱ

*ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ*
*ՈՒՍՊԼԱՆՆԵՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ*
*ՄԵԹՈԴՆԵՐ*

ՀՍԽՀ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1933

# ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԵՌԱԿԱ ՖԻՆԱՆՍԱ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՑ

Հեռակա ֆին-տնտեսագիտական ուսուցումը Հայաստանում գցել է իր խորն արմատները:

Այս ընդունելությունների ընթացքում պետք է ընդգրկվեն միմիայն Հայաստանում (հայկական սեկտորում) 200 հոգի:

Հ. Ս. Խ. Հ.-ի ֆինժողկոմատի կադրերի սեկտորի վորոշմամբ, այս տարի հեռակա ֆինանսական կրթության սիստեմում պետք է ընդգրկվեն բոլոր՝ 1933 թ. ֆին-տնտեսագիտական տեխնիկումի շրջանավարտները:

Նրանք պետք է կազմեն մեր այս տարվա ընդունելության կորիզը, պետք է լինեն մեր ֆինանսական բարձրագույն կրթության առաջամարտիկ—հարվածայինները:

Դառնալով մեր ինստիտուտի լավագույն հեռակայողները, նրանք՝ իրենց շուրջը պետք է համախմբեն շրջանների մեր հեռակայողներին, անհատական և խմբակային աշխատանքների լավագույն որինակներ տան նրանց, հեռակա ֆինանսական կրթության սիստեմի համար դառնան իրական ագիտատորներ:

Ֆին-տնտեսագիտական տեխնիկումի վոչ մի շրջանավարտ, դուրս չպիտի մնա հեռակա ֆին-տնտեսագիտական ինստիտուտից:

Պետք է նշել, վոր վատ են ընդգրկված հեռակա ֆինանսական կրթության սիստեմում նաև ֆին-վարկային աշխատակիցները:

Այս ընդունելությունների ընթացքում այս թերությունն էլ պետք է վերացնել:

Շրջանների ֆին-բաժնի վարիչները և ֆին-բանկային միության տեղական կազմակերպությունները, այս տարվա ընդունելությունները մեծ թվով ֆին-վարկային աշխատավորներով ապահովելու համար, պետք է լայն աշխատանք ծավալեն:

Ֆինանսական ապարատի, բանկի սիստեմի, խնայդրամարկղների, կոլխոզների, սովխոզների և այլ կազմակերպությունների բոլոր հաշվային-պլանային աշխատավորները, վորոնք չունեն բարձրագույն մասնագիտական կրթություն պետք է դառնան Անդրկովկասյան հեռակա ֆին-տնտեսագիտական ինստիտուտի ուսանող:

ՀՍԽՀ ֆինժողկոմատի կադրերի սեկտորի վարիչ՝
Վ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Անդր. Հեռ. Ֆին. Տնտ. Ինստիտուտի Հայաստանի բաժանմունքի դիրեկտոր՝
Վ. ԴԱՐՅԱՆ

11-28168

Երևան, Գյուղհրատի տպարան, Պատ. № 342. Գլավլիտ 8655. Տիրաժ 700

11-28168



> «Թեորիան, յեթե դա իսկական թեորիա յէ, պրակտիկներին տալիս է կողմնորոշման ուժ, հեռանկարի պարզություն, աշխատանքի վստահություն և հավատ մեր գործի հաղթանակին»
>
> ՍՏԱԼԻՆ

Սոցիալիստական շինարարության առաջին շրջանը, ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում տեխնիկային տիրապետելու և վորակը բարձրացնելու խնդիրը, յերկրորդ հնգամյակի պլանի կատարումն իր ամբողջությամբ, լուրջ պահանջներ են դնում բանվոր դասակարգի, կոլտնտեսականների և վողջ խորհրդային աշխատավորության առաջ՝ տիրապետել բոլոր այն տեսական և գործնական գիտելիքներին, առանց վորոնց անհնար է դառնում բեղմնավոր մասնակցությունն այս շինարարության մեջ:

Այս բոլոր խնդիրների ժամանակին և հաջող լուծումը առավելապես կախված է ամենայն ճշտությամբ կատարվող ֆինանսական, վարկային աշխատանքից և ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի գործունեյության ճիշտ պլանավորումից և հաշվառումից:

Ֆինանսա-վարկային, պլանային-տնտեսագիտական և հաշվային—տնտեսագիտական կադրերի պրոբլեմի արագ և ճիշտ լուծումը մեզ հնարավորություն են ընձեռում ապահովել սոցիալիստական շինարարությունը ֆինանսական միջոցներով, միասնական ֆին-պլանի ժամանակին կատարելը, կուտակման նոր աղբյուրների ընդարձակումը և յուրացումը, տնտհաշվարկի արմատացումը, ռուբլու վերահսկողությունը, մեր նվաճումների և թերությունների հայտնաբերումը սոց-հաշվառքի միջոցով և տնտեսական գործունեության բոլոր պրոցեսների ճիշտ և ժամանակին պլանավորումը:

Ֆինանսա-վարկային և հաշվա-պլանային աշխատավորների հիմնական խնդիրն է լինելու տիրապետել հաշվառման տեխնիկային, ֆին-վարկային պլանավորմանը և այդ վողջ աշխատանքի լուսաբանման մարքս-լենինյան մեթոդոլոգիային:

Ստացիոնար ֆին-տնտեսագիտական ԲՈՒՀԵՐ-ի վողջ ցանցն ի վիճակի չե մոտ ապագայում ընդգրկել բոլոր նրանց, ովքեր այդպիսի կրթության սուր կարիք են զգում:

Այդ է պատճառը, վոր ուսուցման ստացիոնար ձևերին

զուգընթաց, բացառիկ նշանակություն ստանում հեռակա կրթության սիստեմը, վորպես արտադրությունից առանց կտրվելու վորակավորման, մասնագիտացման լավագույն ձև։

Անդրկովկասյան Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատի ուսումնա-մեթոդական խորհուրդը վորոշել է. «Պետք է ձեռք առնել բոլոր միջոցները, վորպեսզի բոլոր ֆինանսա-վարկային սիստեմի աշխատակիցները, ովքեր չունեն մասնագիտական բարձրագույն կրթություն, ներգրավվեն հեռակա ֆինանսական ուսուցման սիստեմում»։

Յելնելով այս վորոշումից, ինստիտուտի դիրեկցիան դիմում է Անդրկովկասի բոլոր ֆինանսա-վարկային կազմակերպություններին, (ֆինապարատ, պետբանկ, խնայդրամարկղ և այլն) և մյուս կազմակերպություններում աշխատող ֆին-վարկային և հաշվա-պլանային բոլոր աշխատավորներին, ամենալայն պրոպագանդ տանել հեռակա ֆինանսական-տնտեսագիտական կրթության գաղափարը մասսայականացնելու համար և նպաստել մեր ներգրավվելու հեռակա ֆինանսական ուսուցման ցանցի մեջ, վորքան կարելի յե, մեծ քանակությամբ սովորել ցանկացողներ և այսպիսով՝ տալ յերկրին նոր, լավ պատրաստված և սոցիալիստական շինարարության գործին նվիրված մասնագետներ։

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԴԻՐԵԿՑԻԱ

## ԱՆԴՐ. ՀԵՌ. ՖԻՆ. ՏՆՏ. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ՅԵՎ ԱՎԱՐՏՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Անդրկովկասյան Հեռակա Ֆին-տնտեսագիտական Ինստիտուտի (ինչպես և Հայաստանի բաժանմունքի) նպատակն է պատրաստել և վերապատրաստել ֆին-վարկային սիստեմի համար բարձր վորակի կադրեր և միաժամանակ վորակյալ մասնագետներ, ժողովրդական տնտեսության այլ ճյուղերի և բնագավառների հաշվառման և պլանավորման համար։

Յելակետ ունենալով այս հիմնական նպատակը ինստիտուտն ունենալու յե յերկու ֆակուլտետ։



## 1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

7-րդ սեմեստրից ընդգրկում է 2 բաժանմունք։

ա) ՖԻՆԱՆՍԱԿԱՆ.—Պատրաստում է բյուջետային պլանավորման, պետական յեկամուտների և ժողտնտեսության բոլոր ճյուղերի ֆինանսավորման և խնայդրամարկղների գծով աշխատող մասնագետներ.

բ) ՎԱՐԿԱՅԻՆ.—Պատրաստում է մասնագետներ՝ Պետբանկի սիստեմի, վարկային պլանավորման և ժողտնտեսության առանձին ճյուղերը վարկավորող հատուկ բանկերի համար։

## 2. ՀԱՇՎԱՅԻՆ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

5-րդ սեմեստրից ընդգրկում է 4 բաժանմունք

ա) ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ. Պատրաստում է բարձր վորակի մասնագետներ՝ արդյունաբերության հաշվառման և պլանավորման բնագավառում աշխատելու համար.

բ) ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ. Պատրաստում է բարձր վորակի մասնագետներ՝ գյուղատնտեսության հաշվառման և պլանավորման բնագավառում աշխատելու համար.

գ) ԱՊՐԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ. Պատրաստում է բարձր վորակի մասնագետներ պետառևտրի, կոոպերացիայի և տրանսպորտի բնագավառում աշխատելու համար։

դ) ՎԱՐԿԱՅԻՆ-ՖԻՆԱՆՍԱԿԱՆ. Պատրաստում է բարձր վորակի մասնագետներ ֆինանսական և վարկային սիստեմի հաշվառման, հաշվետվության և վիճակագրական բնագավառում աշխատելու համար։

Բոլոր ֆակուլտետներում ուսման ժամկետը 4 տարի յե։

Համաձայն ԱՆԴՐԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ 1931 թ. հունիսի 6-ի № 173 վորոշման ԱՆԴՐՀԵՌՖԻՆՏՆՏԻՆՍՏԻՏՈՒՏՆ ավարտողներն ստանում են համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություն ավարտողի իրավունքներ և հետևյալ վորակավորումը՝

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ֆակուլտետ ավարտողները՝ տնտեսագետ-ֆինանսիստ կամ տնտեսագետ-վարկագետ (կրեդիտնիկ)։

ՀԱՇՎԱ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ֆակուլտետ ավարտողները՝ հաշվառման և պլանավորման տնտեսագետ, համապատասխան ժող. տնտեսության ճյուղերի և ավարտած բաժնի։

Ինստիտուտում ուսուցումը կատարվում է չորս լեզուներով՝ վրացերեն, թուրքերեն, հայերեն և ռուսերեն, վորի համաձայն յուրաքանչյուր ֆակուլտետ ունի չորս սեկտոր՝ ռուսական, վրացական, թուրքական և հայկական։

# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Անդր. Հեռ. Ֆին. Տնտ. Ինստիտուտն ուսանողության մեծ թվով ընդունելություն է կատարում Անդրկովկասի բոլոր վայրերից։

Այս աշխատանքը բավականին բարդ և մեծ աշխատանք է, այդ պատճառով անհրաժեշտ է ճշտորեն կատարել փաստաթղթերի և դիմումների ինստիտուտին հանձնելու վերաբերյալ բոլոր կանոնները, վորովհետև դրանից է կախված ընդունելության ժամանակին և ճիշտ ձևակերպումը և ուսման պարապմունքները նշանակված ժամանակին սկսելը։

Ինստիտուտը նախազգուշացնում է թե՛ առանձին անհատներին և թե բոլոր գործուղող կազմակերպություններին, վոր յեթե դիմումներն ուղարկեն վոչ պահանջվող ձևով և չպահպանվեն ընդունելության վերաբերյալ ինստիտուտի բոլոր կանոնները, ապա նման դիմումները չեն քննվի և կը թողնվեն անհետևանք։

1. Անդր. Հեռ. Ֆին. Տնտ. Ինստիտուտ ընդունվում են 17 տարեկանից վոչ ցածր և 40-ից վոչ բարձր այն քաղաքացիները, վորոնք չեն զրկված ընտրական իրավունքից և ապրում են աշխատանքային յեկամտով։

Առավելություն տրվում է առաջին հերթին՝ բանվորներին և կոլտնտեսականներին, յերկրորդ հերթին՝ ֆինժողկոմատի սիստեմի և խնայդրամարկղների աշխատակիցներին։

2. Ինստիտուտ ընդունվելու համար անհրաժեշտ է ունենալ միջնակարգ դպրոցների լրիվ կրթություն (տեխնիկում, բանֆակ, իննամյակ, տասնամյակ և նրանց հավասար)։

3. Անդր. Հեռ, Ֆին. Տնտ. ինստիտուտն ընդունելության քննություններ չի կատարում։

4. Բոլոր դիմումները պետք է ներկայացվեն անպայման սույն պրոսպեկտին կցված ձևով։ Վոչ մի ինքնակամ ձևի կամ այլ բարձրագույն ուս. հաստատության բլանկի վրա գրված դիմում չի ընդունվի և չի քննվի։

4. Բոլոր գործուղող կազմակերպությունները և առանձին անհատներն ընդունելության մասին դիմումներ պետք է ուղարկեն անմիջապես ինստիտուտի Հայաստանի բաժանմունքին այս հասցեյով. ՅԵՐԵՎԱՆ, ՖԻՆԺՈՂԿՈՄԱՏ, «ԶԱԿԶԻՖԵՆ»։

Դիմումներ ընդունում են նաև ինստիտուտի շրջանների



բոլոր հենակետերը (Հայաստանում Լենինականի, Ղարաքիլիսայի, Աշտարակի և Ղամարլվի հենակետեր ) և անմիջապես ուղարկում համապատասխան բաժանմունքին։

Դիմումները կարելի յե հանձնել թե՛ անձամբ, և թե՛ ուղարկել փոստով։ Դիմումների ընդունելությունը կատարվելու յե մինչև նոյեմբերի 1-ը, վորից հետո ուղարկված դիմումները չեն քննվի և կթողնվեն անհետևանք։

Նոյեմբերի 1-ից մինչև 15-ն ընդունող հանձնաժողովը կըքննի բոլոր դիմումները, իսկ 15-ից մինչև նոյեմբերի 30-ն ուսանողները կստանան հանձնաժողովի վորոշումը, ուսանողական տոմսեր և ստուգման գրքույկներ։

Ինստիտուտը կատարում է հաշվառում և ուսման նյութերը նախապատրաստում է դեկտեմբերի 1-ից մինչև 15-ը, այն հաշվով, վոր դեկտեմբերի 15-ից մինչև 31-ն ուսանողությանն ուղարկի ուսումնական նյութերի առաջին ծանրոցը և նորմալ ուսումնական տարին սկսի հունվարի 1-ից։

Ադրբեջանում Թուրքական սեկտորի ուսումնական տարին և պարապմունքներն սկսվելու յեն նոր ընդունվածների համար սեպտեմբերի 1-ից. այդ իսկ պատճառով դիմումներն այս սեկտորի համար կընդունվեն միայն մինչև սեպտեմբերի 15-ը։

Վորպեսզի ինստիտուտն ապահոված լինի հասարակական և քաղաքական տեսակետից բավականաչափ ստուգված ուսանողական կազմով, այս տարվա ընդունելությունները կատարվելու յեն միայն գործուղումներով կամ հիմնարկությունների, ձեռնարկությունների, կուսակցական և պրոֆկազմակերպությունների հանձնարարականների կամ յերաշխավորության հիման վրա։

Գործուղումների կամ յերաշխավորության ձևակերպումը պետք է կատարվի նույն հարցաթերթիկի վրա՝ համապատասխան տեղում։

7, Բանվորների և ծառայողների խնամքի տակ գտնվողներն ընդունվում են նույն ձեռնարկության կամ հիմնարկության կուսակցական և պրոֆեսիոնալ կազմակերպությունների միջնորդությամբ և յերաշխավորությամբ։

8. Առանց գործուղման և յերաշխավորության՝ դիմումները չեն քննվի։

9. Թե՛ գործուղման և թե անհատական կարգով ընդունվել ցանկացող յուրաքանչյուր քաղաքացի պետք է ինստիտուտին անձնապես դիմում տա։ Այս կարգից վոչ մի շեղում չի թույլա-

տրվում կատարել։ Նույնպես չի թույլատրվում, որ ինստիտուտի դասընթացն անցնելու համար ուս. նյութերի 1 կոմպլեկտով օգտվեն մի քանի հոգի, կամ ինստիտուտ դիմեն կոլեկտիվ կերպով ընդունվելու համար։ Նման դիմումները կթողնվեն անհետևանք։

10. Դիմումի մեջ անպայման պետք է նշված լինի՝ որ ֆակուլտետը և որ սեկտորն է ցանկանում ընդունվել դիմողը՝ իսկ ֆակուլտետի բաժանմունքն ուսանողն ընտրում է այն սեմեստրից, յերբ սկսվում է ֆակուլտետի բաժանումն առանձին բաժինների (ցիկլերի)։

11. Միաժամանակ յերկու ֆակուլտետում կամ բաժանմունքում սովորելը, ինչպես և մի գործուղվածին մյուսով փոխարինելը չի թույլատրվում։

12. Դիմումին պետք է կցել հետևյալ փաստաթղթերը.

ա) միջնակարգ կրթության ավարտական վկայականը կամ համապատասխան գործկոմների կողմից հաստատված պատճենը. այս մի այլ տեղեկանքով կամ վկայականով փոխարինելը չի թույլատրվում.

բ) ուսման նյութերի համար պահանջված առաջին մուծումը (24 ռուբ. կամ 36 ռուբլի և մուտքի վճարը՝ 5 ռուբ.) հաստատող անդորրագիրը կամ նրա պատճենը.

գ) վկայական դիմողի սոցիալական դրության, սոցիալական ծագման և տարիքի մասին.

դ) մերժման դեպքում հայտնվում է դիմում տվողին և վերադարձվում է ուս. նյութերի համար կատարած մուծումը։

Մուտքի վճարը վոչ մի դեպքում չի վերադարձվում։

13. Ովքեր ընդունվում են և ստանում ուսանողական տոմս, ինստիտուտի հետ գրագրության դեպքում պարտավոր են միշտ նշել տոմսի №-ը։

## ԳՈՐԾՈՒՂՎԱԾՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

1. Անդր. Հեռ. Ֆին. Տնտ. Ինստիտուտի ուսումնական պլանով նախատեսված մասնագիտությունների վերաբերյալ, կադրերի պլանային պատրաստության գործում, ձեռնարկությունների և հիմնարկությունների կարիքները բավարարելու համար, կազմակերպվում է հիմնարկությունների, ձեռնարկությունների և այլ կազմակերպությունների բանվորներից և ծառայողներից ինստիտուտ գործուղվողների ընդունելություն։



2. Գործուղվողների դիմումները գործուղման մասին յեղած ստորագրություններով (պրոսպեկտին կցված ձևով) ուղարկվում են ինստիտուտի հանրապետական բաժանմունքներին, կցելով նրանց հիմնարկի պետի կողմից հաստատված, սրան կից ձևի ցուցակ։

Գործուղվածների ցուցակին անհրաժեշտ է կցել բոլոր այն փաստաթղթերը, վորոնք պահանջվում են բոլոր ընդունվողներից, յուրաքանչյուրի համար առանձին-առանձին։

Մի քանիսին վերաբերող տեղեկանքներ և վկայականներ չեն ընդունվում։

Այդ ցուցակներին պետք է կցել նաև մուտքի վճարի և առաջին նվազի մուծման մասին տեղեկանք. հակառակ դեպքում ցուցակները չեն քննվի։

3. Ֆինժողկոմատի, պետբանկի և խնայդրամարկղների կողմից գործողումներ պիտի կատարվեն միայն յերկրային, հանրապետական և մարզային ժողկոմատների, գրասենյակների և վարչությունների միջոցով։

## ՈՒՍՄԱՆ ՅԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՎԱՐՁԸ

1. Ուսման և ուսումնական նյութերի վարձ սահմանվում է հետևյալ չափով.

ա) Ֆինժողկոմատի սիստեմի և խնայդրամարկղների (վորոնք ֆինանսավորում են ինստիտուտը) աշխատակիցներից, զինվորական ծառայողներից և թոշակառուներից (վորոնք օգտվում են արտոնություններով) գանձվում է միմիայն ուսումնական նյութերի համար (դասախոսությունների և գրքերի տպագրության, մեթոդական մշակումների և ցուցումների, կոնսպեկտների, գրախոսականների, հարցերի գրավոր պատասխանների և այլն) ընդամենը 120 ռուբլի տարեկան.

բ) Մնացած բոլորից՝ 180 ռուբլի։

գ) Սրանից բացի բոլոր դիմում տվողներից դիմումի հետ պահանջվում է մուտքի վճար 5 ռուբլի։

2. Վարձը գանձվում է հետևյալ ժամկետներով.

| ՄՈՒԾՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ | ՄՈՒԾՄԱՆ ՉԱՓԸ | |
|---|---|---|
| | 1-ԻՆ ԿԱՐԳԻ | 2-ՐԴ ԿԱՐԳԻ |
| 1. Ընդունելության մասին դիմում տալու ժամանակ . . . . . . . . . | 29 ռուբ. | 41 ռուբ. |
| 2. 1934 թ. հունվարի 1-ից վոչ ուշ . . | 24 » | 36 » |
| 3. 1934 թ. մայիսի 1-ից վոչ ուշ . . . | 24 » | 36 » |
| 4. 1934 թ. օգոստ. 1-ից վոչ ուշ . . . | 24 » | 36 » |
| 5. 1934 թ. հոկտ. 1-ից վոչ ուշ . . . | 24 » | 36 » |
| ԸՆԴԱՄԵՆԸ . . . | 125 ռուբ. | 185 ռուբ. |

3. «ԶԱԿԶԻՖԵՆ»-ի հին ուսանողները (II, III և IV կուրսեր և այն ուսանողները, վորոնք մնացել են առաջին կուրսում յերկրորդ տարին) 1934 թ. ուս. վարձը մուծում են հետևյալ կարգով.

| ՄՈՒԾՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ | ՄՈՒԾՄԱՆ ՉԱՓԸ | |
|---|---|---|
| | 1-ԻՆ ԿԱՐԳԻ | 2-ՐԴ ԿԱՐԳԻ |
| 1934 թ. հունվարի 1-ից վոչ ուշ | 24 ռուբ. | 36 ռուբ. |
| » ապրիլի 1-ից » » | 24 » | 36 » |
| » հունիսի 1-ից » » | 24 » | 36 » |
| » ոգոստոսի 1-ից » » | 24 » | 36 » |
| » հոկտեմբ. 1-ից » » | 24 » | 36 » |
| ԸՆԴԱՄԵՆԸ . . . | 120 ռուբ. | 180 ռուբ. |

Ամենաառաջադեմ ուսանողները սահմանված ժամկետներին բոլոր առարկաներից լավ գնահատական ունենալու և ուս. վարձը ժամանակին կանոնավոր մուծելու դեպքում, ազատվում են ուս. վարձի մի վորոշ մասից, դիրեկցիայի հայեցողությամբ, վոչ պակաս քան մուծման յենթակա վարձի 25%-ը։ Հասանելիք մուտքի 5 ռուբլի վճարը և նախնական մուծումը . . . ռուբլի, պետք է փոխանցել ինստիտուտի Հայաստանի բաժանմունքի ընթացիկ հաշվին, Յերևան, Պետբանկ «ԶԱԿԶԻՖԵՆ»-ի Հայաստանի բաժանմունքի ընթացիկ հաշիվ № 150/20. կամ ինստիտուտի հասցեյով Յերևան, ֆինժողկոմատ, «ԶԱԿԶԻՖԵՆ»-ի Հայաստանի բաժանմունք։

## ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ

Ինստիտուտի ուսումնական պլանը կառուցված է համաձայն Անդրֆինժողկոմատի ուսումնա-մեթոդական սեկտորի ցուցմունքների 1933/34 ուսումնական տարվա համար։ Մասնագիտությունների անվանակարգը (նոմենկլատուրան) և ինքը ուսումնական պլանը խստորեն յելնում են տվյալ պրոֆիլի մասնագետների պատրաստությունից և այդ սկզբունքին են յենթարկվում դիսցիպլինների դասավանդումը և արտադրական պրակտիկան։

Ինստիտուտում սովորելու ժամկետը 4 տարի յե, վորը բաժանվում է 8 սեմեստրի. հեռակայողի ժամանակի բյուջեն կազմվում է ժամանակի հետևյալ բաշխումից։

1. Ուսումնական տարին համարվում է 11 ամիս։ Մեկ ամսվա ընթացքում ուսանողները պարապում են 25 որ, 3 ակադեմիական ժամ որական։



2. Արձակուրդ տրվում է տարեկան մեկ ամիս։

3. Արտադրական պրակտիկային տրվում է հինգերորդ սեմեստրից հետո մեկ ամիս և 7-րդ սեմեստրից հետո մեկ ամիս։ Այսպիսով ուսումնական պլանի կատարման համար տրվում է 4×11×25×3330 ժամ, վորից արտադրական պրակտիկային՝ 150 ժամ։

Նյութի մշակման համար ընդունված է մեկ ժամում 4—6 յերես։ Ժամանակի այս հաշվառման ժամանակ են ուսանողներին կուղարկվեն ուսումնական նյութեր։

Միաժամանակ, վորպես լրացում, հեռակայողներին կհանձնարարվի դասավանդվող դիսցիպլիններից լրացուցիչ գրականություն։

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ-ՎԱՐԿԱՅԻՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ

### 1. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՑԻԿԼ

| | Ընդ. | Հեռակ. | Բաց. | Ստուգ. աշխ. | Սեմեստր |
|---|---|---|---|---|---|
| 1. Դիամատ . . . . . . . . | 250 | 200 | 50 | 2 | 1 և 2 |
| 2. Քաղաքատնտեսություն . . | 300 | 240 | 60 | 3 | 1,2 և 3 |
| 3. Տնտ. ուս. պատմ. . . . . . | 50 | 40 | 10 | 1 | 4 |
| 4. Տնտես. աշխարհագր. . . . . | 150 | 110 | 40 | 2 | 3 և 4 |
| 5. Խորհ. տնտ. տեսություն . . | 150 | 170 | 40 | 2 | 5,6 և 7 |
| 6. ԽՍՀՄ-ի և ԱՍՖԽՀ-ի ժող. տնտ. զարգ. պատմ. . . . . . | 60 | 50 | 10 | 1 | 4 |
| 7. Լենինիզմ . . . . . . . . | 80 | 60 | 20 | 1 | 7 և 8 |

### 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ—ԳԻՏԱԿԱՆ ՑԻԿԼ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 8. Մաթեմատիկա . . . . . . . | 100 | 70 | 20 | 2 | 1,2 |
| 9. Ոտար լեզու . . . . . . . . | 200 | 150 | 50 | 6 | 2,4,5,6,7,8 |
| 10. Ռուսերեն . . . . . . . . . | 200 | 150 | 50 | 6 | 1,2,3,4,5,6 |

## 3. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԻԿԼ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 11. Սոցիալիստական հաշվառում | | | | | |
| ա) Բալ. հաշվ. տես. | 120 | 90 | 30 | 2 | 1 և 2 |
| բ) Վիճակագրություն | 120 | 90 | 30 | 2 | 1 և 2 |
| գ) Հաշվետվ. և պլանի վերլուծում | 60 | 50 | 10 | 1 | 8 |
| 12. Կապ. յերկր. ֆինանսներ | 60 | 45 | 15 | — | 4 |
| 13. ԽՍՀՄ-ի ֆինանսներ | 120 | 110 | 20 | | 5—6 |
| 14. Կապ. յերկր. փող և վարկ | 60 | 45 | 30 | 6 | 6 |
| 15. ԽՍՀՄ-ի փող և վարկ | 100 | 70 | 20 | — | 7 և 8 |
| 16. Վարկավոր. պլանավոր. | 70 | 50 | 20 | | 8 |
| 17. Էկոնոմիկա և ֆինանսներ | 70 | 50 | 20 | | |
| ա) Արդյունաբերություն | | | | | 5 |
| բ) Գյուղատնտեսություն | 60 | 45 | 15 | | 6 |
| գ) Տրանսպորտ | 50 | 40 | 10 | | 8 |
| դ) Խորհրդ. առևտուր | 50 | 40 | 10 | | 7 |
| ե) Կոմ. տնտ. | 45 | 35 | 10 | | 8 |
| 18. Տեղական ֆինանսներ | 80 | 60 | 20 | | |
| 19. Պետվարկ և խնայգործ. | 120 | 100 | 20 | | 5 և 6 |
| 20. Տնտ. իրավունք | 60 | 50 | 10 | | 6 |
| 21. Տեխնոլոգ. պրոցեսներ. ֆիզիկ. և քիմ. տարրերով | 120 | 80 | 40 | | 3 ,4 |
| 22. Ոպերատիվ տեխնիկ և հաշվառում վարկագետի համար | 120 | 80 | 40 | | 5,6 |

## ՀԱՇՎԱ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ

### 1. ՍՈՑ. ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՑԻԿԼ

| | Ընդ. | Հեռակ. | Բան. | Ստուգ. աշխ. | Սեմեստր |
|---|---|---|---|---|---|
| 1. Դիամատ | 250 | 200 | 50 | 2 | 1, 2 |
| 2. Քաղաքատնտեսություն | 330 | 240 | 60 | 3 | 1, 2, 3 |
| 3. Լենինիզմ | 80 | 60 | 20 | 2 | 6, 7 |
| 4. Տնտ. աշխարհագրություն | 130 | 100 | 30 | 2 | 3, 4 |
| 5. Խորհտնտ. տեսություն | 150 | 120 | 30 | 2 | 5, 6 |
| 6. Տնտես. գիտ. պատմություն | 50 | 40 | 10 | 1 | 4, 5 |
| 7. ԽՍՀՄ և ԱՍՖԽՀ ժող. տնտ. զարգացման պատմություն | 60 | 50 | 10 | 1 | 5,6 |



### 2. ԸՆԴ. ԳԻՏԱԿԱՆ ՑԻԿԼ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 8. Մաթեմատիկա | 100 | 70 | 30 | 1 | 1,2 |
| 9. Ռուսաց լեզու (ազգային սեկտ. համար) | 150 | 190 | 60 | 6 | 1,2,3,4,5,6 |
| 10. Օտար լեզու | 150 | 190 | 60 | 2 | 1,2,3,4,5և6 |

### 3. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԻԿԼ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 11. Սիցիալիստական հաշվառում | | | | | |
| ա) Բալանս. հաշվ. | 150 | 110 | 40 | 2 | 1,2,3 |
| բ) Արդյունաբեր. գյուղատնտ. առևտրի մասնագիտական վիճակագր. | 100 | 70 | 30 | 2 | 4,5 |
| գ) Վիճակագրություն | 150 | 120 | 30 | 2 | 1,2,3 |
| դ) Մասն. հաշվ. (արդյունաբեր. գյուղատնտ. առևտրի | 100 | 80 | 20 | 2 | 3,4 |
| ե) Պլանավորման և հաշվետվության անալիզ | 90 | 65 | 25 | 2 | 6,7 |
| զ) Մեքենայացրած հաշվառում | 60 | 45 | 15 | 1 | 8 |
| 12. Տնտ. իրավունք | 50 | 40 | 10 | 1 | 4 |
| 13. Արդյունաբ. գյուղատնտես. և առևտրի ֆին. և վարկեր | 120 | 90 | 30 | 2 | 7,9 |
| 14. Արդյունաբ. գյուղատնտես. և առևտրի պլանավորման էկոնոմիկա | 150 | 110 | 40 | 2 | 5,6 |
| 15. Արդֆինպլանների կազմումը և կատարումը | 120 | 90 | 30 | 1 | 7,8 |
| 16. Արդյունաբ. գյուղատնտեսության և առևտրի կազմակերպում | 120 | 90 | 30 | 2 | 7,8 |
| 17. Բյուջե և միասնական ֆինպլան | 80 | 40 | 20 | 1 | 7,8 |
| 18. Տեխ. մինիմում (արդյուն. գյուղատնտ. առևտրի) ֆիզիկայի և քիմիայի . տարրերով | 150 | 100 | 50 | 2 | 3,4 |

## ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՍԻՍՏԵՄԸ ՅԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ.

### ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ

Անդր. հեռ. ֆին. տնտ. ինստիտուտի հեռակա ուսուցման սիստեմը կառուցված է հաշվի առնելով այն բնորոշ և առանձնահատուկ պայմանները, վորոնք յուրահատուկ են հեռակա ուսուցմանը:

Հեռակա ուսուցման բնորոշ առանձնահատկությունը, վորով տարբերվում է նա ուսուցման ստացիոնար ձևերից, հանդիսանում է այն, վոր ուսանողի ուսումնական աշխատանքների ղեկավարությունը Անդրհեռֆինտնտինստիտուտը կատարում է վոչ անմիջապես, այլ գլխավորապես գրագրության միջոցով, այսինքն՝ հեռակա ձևերի միջոցով:

Դրա պատճառով, հեռակա ուսուցման պայմաններում, ամենից շատ ստիպված ենք հաշվի առնել ուսանողի ինքնագործունեությունը, պլանով աշխատելու կարողությունը և պարզ գիտակցումը այն նպատակների, վորոնց համար կատարվում է վողջ աշխատանքը:

Ինստիտուտի ուսումնա-մեթոդական ղեկավարությունը կայանում է նրանում, վոր նա կազմում է առաջադրություններ, մեթոդական ցուցմունքներ, կազմակերպում է բանավոր կոնսուլտացիաներ, կատարում է գրավոր կոնսուլտացիաներ, բացատրություններ է տալիս հետաքրքրող հարցերին և այլն: Ինստիտուտը առանձին պրակների՝ առաջադրությունների ձևով հրատարակում է ուսումնական ձեռնարկներ, վորոնք ներկայացնում են ընդհանուր կուրսից վերցված մի վորևէ պրոբլեմի միանգամայն լրիվ շարադրությունը:

Յուրաքանչյուր առաջադրության կամ ուսումնական նյութի վերջում տրվում է լրացուցիչ գրականության ցուցակը:

Հաշվի առնելով հեռակա ուսուցման մեթոդիկայի սկզբունքները և կապելով այն կուսակցական դրույթի հետ՝ տալ ուսանողներին մարքս-լենինյան ճիշտ քաղաքական դաստիարակություն, բոլոր ուսումնական ձեռնարկները կազմվում են կուսակցական ընդհանուր գծի համեմատ քաղաքական ճիշտ դիրքավորման սկզբունքներով:

Ուսանողության առաջադիմության աստիճանը վորոշելու համար, կուրսի վորոշ բաժնից ուղարկվում է նրանց ստուգողական աշխատանք, վորը պարտավոր են կատարել և ներկայացնել ինստիտուտ:

Բացի ստուգողական աշխատանք կատարելուց, այս նպատակի համար կազմակերպվում է նաև բանավոր հարցաքննություն



### ՈՒՍՈՒՑՄԱՆ ՍՏԱՑԻՈՆԱՐ ՁԵՎԸ

Ուսանողների հեռակա ուսուցման աշխատանքների տեմպը արագացնելու համար ինստիտուտը՝ վորպես հեռակա աշխատանքների լրացուցիչ միջոց կազմակերպում է նաև բանավոր կոնսուլտացիաներ: Այս նպատակով ինչպես կենտրոններում՝ բաժանմունքներին կից (Թիֆլիս, Բագու, Յերևան), նույնպես և շրջաններում հենակետերին կից (Հայաստանում՝ Լենինականում, Աշտարակում և այլն) պարբերաբար կազմակերպվում են բանավոր պարապմունքներ և կոնսուլտացիաներ, վորտեղ կատարվում է ուսումնասիրության յենթակա դիսցիպլինների հիմնական պրոբլեմների մշակումը, ընդունվում են բանավոր քննություններ, կազմակերպվում են ուսանողների կոլլեկտիվ և խմբակային աշխատանքները, անցկացվում են կոնֆերանսներ և այլն:

Հեռակա ուսուցման և ստացիոնար դպրոցի մեթոդների նման միացումը, շատ է հեշտացնում հեռակայողի անհատական աշխատանքները:

Արտադրական ուսուցումը հեռակա կրթության սիստեմում, ինչպես ստացիոնար ուսումնական հիմնարկներում, օրգանապես կապված է տեսական դասընթացքի հետ և հանդիսանում է ուսումնական աշխատանքի անքակտելի մասնիկը:

Արտադրական ուսուցումը պետք է կատարվի Ա. Ս. Ֆ. Խ. Հ. համապատասխան հիմնարկություններում և ձեռնարկություններում, համաձայն Անդր՝ Հեռ. Ֆին. Տնտ. Ինստիտուտի հատուկ ծրագրերի և հրահանգների:

Արտադրական ուսուցման իրավունք ստանում են այն ուսանողները, ովքեր ժամանակին տալիս են անհրաժեշտ թվով քննություններ և կատարում են ստուգողական աշխատանքները:

Այն ուսանողները, ովքեր ունեն պրակտիկ աշխատանքի մեծ ստաժ, կամ կազատվեն արտադրական ուսուցումից կամ հաշվի կառնվի նրանց անհատական պրակտիկ աշխատանքը իրենց աշխատավայրում:

### ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Ստուգողական բոլոր աշխատանքները ներկայացնելուց բանավոր քննություններ տալուց և արտադրական պրակտիկան անցկացնելուց հետո, հեռակա ուսուցումը վերջանում է բանավոր քննություններով, վորտեղ տրվում է ուսանողի կատարած աշխատանքների ընդհանուր հանրագումարը, վորը ցույց է տալու թե, ինչ չափով է ուսանողը տիրապետել ուսումնասիրած գիտություններին

Ավարտական քննությունները անպայման կատարվում են բանավոր՝ միայն գիտական և մասնագիտական ցիկլի առարկաներից և վոչ վողջ ուսումնական տարիների ընթացքում մշակված բոլոր առարկաներից:

-30-
1933թ. 419
11
28168

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՀՅՈՒՍԿՍ. ՖԻՆԱՆՍԱ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# Դ Ի Մ Ո Ւ Մ

Խնդրում եմ ընդունել ինձ վորպես ուսանող՝

Հայկական սեկտորի | Ֆին-վարկ...
Ռուսական (ընդգծել) | Հաշվա-տնտ...

Պարտավորվում եմ կատարել ինստիտուտի բոլ... ված ժամկետներին կանոնավոր մուծել ուսման նյութեր...

Մուտքի վճարը 5 ռ. յեվ սկզբնական մուծումը ... փոխադրել հետեվյալ հասցեյով. Յերեվան, Ֆինժողկոմատ, Անդր. Հեռ. Ֆին. Տնտ. Ինստիտուտի Հայաստանի բաժանմունք կամ Պետբանկի Հայ. գրասենյակ, ընթացիկ հաշիվ № 150/20.

Ամբողջ գրագրությունները ու դասախոսական նյութերը խնդրում եմ ուղարկել հետեվյալ հասցեյով՝ ________________ (դիմողի լրիվ հասցեն)

## ԸՆԴՈՒՆՎՈՂԻ ԱՆԿԵՏԱ

1. Ազգանուն, անուն, հայրանուն ________________
2. Սեռ ________ 3. Ազգություն ________ 4. Պրոֆեսիա ________
5. Ծննդյան թիվ ______ 6. Վո՞ր արհմիության անդամ է ________ միության ստաժը ______ տոմսի № ______ 7. Վորպես ինչ եք աշխատել, վոր ժամանակից յեվ մինչեվ յերբ, վորտեղ, վո՞ր արտադրության մեջ կամ հիմնարկում եք աշխատել ________________
8. Կրթություն ________________ Ցույց տալ, վո՞ր ուսումնական հիմնարկում է սովորել, ավարտել է թե վոչ, յերբ յեվ վորտեղ:
Բարձրագույն
Միջնակարգ
Տարրական
Մասնագիտական (ընդգծել)
9. Կուսակցականությունը այժմ Համ. Կ. (բ) Կ. Համ. ԼԿՅԵՄ անդամ կամ թեկնածու ________ Յերբվանից ________ տոմսի № ________
10. Յեղել է անցյալում քաղաքական այլ կուսակցության մեջ, մատնանշել անունը ________________
11. Ծնողների սոցիալական դրությունը ա) բանվոր, գյուղացի, միջակ, կուլակ, չքավոր, բ) ծառայող. գ) տնայնագործ, առեվտրական, ազնվական (ընդգծել).
12. Անկետան լրացնողի սոց. դրությունը ________________
13. Վո՞ր ձեռնարկում կամ հիմնարկում է աշխատում ________________ Հասցեն ________________
14. Ամսական աշխատավարձի չափը ________________

Ամիս, թիվ, տարի      Ստորագրություն ________ ________

Տեղեկությունների ճշտությունը ներկայացված փաստաթղթերի համեմատ յեվ թեկնի ________ անձնական ստորագրությունը հաստատում եմ:

| Կ. Տ. | Պաշտոնական անձի ստորագրությունը, վորը վավերացնում է սույն տեղեկությունները:

Սխալ տեղեկություններ տալու դեպքում այն անձինք, ովքեր լրացնում են անկետան, յենթարկվում են պատասխանատվության:

### ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԳՈՐԾՈՒՂՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

Ընկ. ________________ գործուղվում է ________________
(գործուղող կազմակերպության լրիվ անունը)
ինստիտուտի ________ կուրսը ________ , ֆակուլտետը ընդունվելու համար: Գործուղվողի հառաջադիմության մասին խնդրվում է տեղեկացնել հետեվյալ հասցեյով ________________

| Կ. Տ. | Վարչություն՝
Ստորագրություններ կուս. կամ պրոֆ. կազմակերպության ________________

### ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ.

________________
(հիմնարկի կամ ձեռնարկի անունը)
________________
Խնդրում է ընդունել ինստիտուտի
________________ ֆակուլտետ

| Կ. Տ. |

Վարչություն՝
Ստորագրություն

Կուս. կամ պրոֆ. կազմակերպության կողմից տրված համառոտ բնութագիրը.
________________

| Կ. Տ. | Ս...

ՀՀ Ազգային գրադարան
NL0933148